«Տիգրան Աբգարյան մարտական պատրաստության ակումբ»
հայրենասիրական ՀԿ
ՀՀ, ք. Գյումրի, Սարգսյան 2 նրբ., տուն 17
Հեռ.՝ +374 77 19 03 21

# Դիմում

Հարգելի՛ Սամվել Բալասանյան,

«Տիգրան Աբգարյան մարտական ակումբ» հայրենասիրական ՀԿ-ի ողջ անձնակազմի անունից դիմում ենք Ձեզ, որպեսզի հատկացնեք համապատասխան տարածք՝ մարտավարատեխնիկական աշխատանքների, գործնական դասընթացների ու միջոցառումների կազմակերպման ու անցկացման համար, որի տրամադրման արդյունքում կկարողանանք խրամատներ կառուցել և ուսումնական դասեր անցկացնել, կիրականացնենք նախազորակոչային պատրաստություններ:

Մեզանում այսօր մեծ հիմնախնդիր է տարածքի բացակայությունը. գործնական պարապմունքների և պատրաստումների կազմակերպման և անցկացման համար առկա տարածք չունենք: Տարածքը նպատակահարմար է, որ լինի Ղարսի խճուղու հարևանությամբ գտնվող գետի ափի տարածքում:

Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեզանում արդիական խնդիր է զինվորական, մարտավարական տեխնիկաների տիրապետումը, ուստի ակնկալում ենք Ձեր դրական արձագանքը:

Դիմումին կից ներկայացնում ենք մեր ծրագրային առաջարկը և մեր գործունեության վերաբերյալ հաշվետվությունը:

Ակնկալում եմ Ձեր դրական արձագանքը:

Հարգանքներով՝ Ժորա Աբգարյան

14.01.2020

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 27 05 20 27 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 9555

Ծրագիր-առաջարկ

| Ծրագրի անվանումը |
|---|
| *Մարտական պատրաստության ակումբի ակտիվացում և գործնական պարապմունքների խթանում* |

| | |
|---|---|
| Ծրագրի ղեկավար /անուն, ազգանուն, հեռախոս, / | Աբգարյան Ժորա, բջջ. 077 190 321 |
| Կազմակերպության անվանումը | «ՏԻԳՐԱՆ ԱԲԳԱՐՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ» ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ |
| Ծրագրի իրականացման վայրը | Քաղաք Գյումրի |

Ծրագրի ամփոփ նկարագիր

Մարտական ակումբի շրջանակներում նախատեսում ենք մարտական պատրաստության ակումբի ակտիվացում և գործնական պարապմունքների խթանում Շիրակի մարզում:

«Տիգրան Աբգարյան մարտական ակումբ» հայրենասիրական ՀԿ-ն 3 տարի շարունակ իրականացնում է անվադողերի հավաքում և տեղափոխում սահմանային զորամասերը:

Նախատեսում ենք նաև ստեղծել քննարկումների, ժամանցի և հայրենասիրական միջոցառումների կազմակերպման համար բաց դաշտային տարածք, որտեղ կիրականացվեն տարատեսակ քննարկումներ, դասընթացներ, հանդիպումներ և կինոդիտումներ: Մենք ակնկալում ենք բաց դաշտային տարածքի կամ շինության տրամադրում, որտեղ կանցկացվեն մարտական պատրաստության գործնական պարապմունքները:

«ՏԻԳՐԱՆ ԱԲԳԱՐՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ» ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ համար այն կարող է ծառայել որպես ծրագրային գաղափարների իրականացման հարթակ:

Հիմնախնդրի նկարագրություն

Ծրագրի նախաձեռնման գաղափարը պայմանավորված է Շիրակի տարածաշրջանում հայրենասիրական միջոցառումների և ոչ ֆորմալ կրթական միջոցառումների իրականացման սակավությամբ, ինչպես նաև այստեղ համապատասխան հարթակի բացակայությամբ:

Անհրաժեշտ ենք գտնում այստեղ ձևավորել այնպիսի հարթակ, որը հնարավորություն կընձեռնի մեր հասարակության լայն զանգվածի անվճար հիմունքներով օգտվել մեր կենտրոնից, կազմակերպել միջոցառումներ, քննարկումներ, դասընթացներ, տեղեկատվական միջոցառումներ, ժամանցային երեկոներ, գրքի շնորհանդեսներ, բակային, ճամբարներ ու տարատեսակ այլ ծրագրեր:

Այս նախաձեռնությամբ մեր Գյումրի քաղաքում ստեղծում ենք տարածաշրջանային հայրենասիրական կենտրոն, որտեղ մշտապես հանդիպումներ կկազմակերպվեն ռազմական ոլորտի ներկայացուցիչների հետ: Նպատակադրել ենք սույնով

հասարակության մեջ ամրապնդել ազգ-բանակ կոնցեպտը, արթնացնել և զարգացնել սերը դեպի հայրենիք և ապացուցենք, որ իզուր չեն թափվել մեր տղաների, այրերի, հերոսների արյունը հանուն Հայրենիքի, հանուն մեր երկրիխաղաղության ապահովման ու պահպանման: Գտնում ենք, որ ժամանակն է արժևորել մեր ազգային, ավանդական, հոգևոր արժեքները և սերմանել հայրենասիրություն մեր սերունդների մեջ, գործնական քայլերով արմատախիլ ենք անելու օտարացումը մեր արմատներից:

Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեզանում արդիական խնդիր է մարտական դիրքերի ամրապնդումը և անվտանգության ապահովումը, մարտական պատրաստությունը, անհրաժեշտ ենք համարում տարածքի առկայություն՝ գործունեություն ծավալելու համար:

**Ծրագրի նպատակը**

Ծրագրի նպատակն է ստեղծել կենտրոն, որը հնարավորություն կտա հանրության լայն զանգվածների կյանքի կոչել իրենց ծրագրերը, ինչպես նաև մեր կազմակերպության միջոցառումների ու ծրագրերի կազմակերպման հարթակ կհանդիսանա այն: Նպատակը երիտասարդների, երեխաների կարողությունների և հմտությունների բարելավումն է, հայրենասիրության սերմանումն է, ոչ ֆորմալ կրթական ու տեղեկատվական հարթակի զարգացումը:

**Ծրագրի շահառուները**

Ծրագրի շահառուներն են Շիրակի մարզի, Գյումրի համայնքի բնակիչները, տարբեր հասարակական կազմակերպություններ ու միավորումներ, անհատներ, մշակույթի, գիտության, ռազմական ոլորտի ներկայացուցիչներ:

**Գործողություններ**

Ծրագրի բաղկացուցիչ մասերն են՝

- Նախապատրաստական փուլ,
- Իրականացման փուլ,
- Ամփոփման փուլ:

Դասընթացների թեմաները բազմաոլորտային են․ հանրայինից մինչ տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Լսարանային դասերը ներառելու են նաև ավիամոդելային, հրթիռաշինական, ռոբոտաշինական դասընթացներ՝ տեսական և գործնական աշխատանքներով, ինչպես նաև խոչնդոտների հաղթահարման պարապմունքեր, կամավորություն, լիդերություն, թիմային աշխատանք, հանրային խոսք և մի շարք այլ թեմատիկ դասընթացներ:

Դասընթացները վարելու են ոլորտային մասնագետները:

Նախատեսում ենք նաև բացօթյա ճամբարների կազմակերպում, բանավեճերի ու քննարկումների անցկացում, կինոդիտումներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, գրքերի շնորհանդեսներ ու տարատեսակ այլ միջոցառումների իրականացում:

Կենտրոնը ունենալու է առցանց հարթակ, որտեղ կիսվելու ենք նորություններով, համապատասխան տեղեկատվությամբ, ինչպես նաև լուսաբանելու ենք կետրոնում անցկացվող միջոցառումները:

Ցանկանում ենք, որ մեզ տրամադրեք բաց դաշտային տարածք ու շինություն՝ մարտական դպրոցի գործունեության իրականացման համար:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործունեության նպատակը՝ Դիրքերի ամրապնդում

Կազմակերպիչ և աշխատանքների համակարգող՝ Ժորա Աբգարյան

Հաշվետվություն՝ 2018- 2020 թթ.

| Գործողություններ |
|---|
| «Տիգրան Աբգարյան մարտական պատրաստվածության ակումբի» նախագահ Ժորա Աբգարյանի նախաձեռնությամբ 2018 թվականից մինչ օրս իրականացվում է անվադողերի հավաքում և տեղափոխում ՀՀ և Արցախի Հանրապետության զորամասեր՝ նպաստելով և աջակցելով Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դիրքերի ամրապնդմանը: Բեռնատարներից 28-ը եղել են Արցախի «Ոսկու հանքի» մեքենաները, որոնց թիվը համալրվել է ևս 18 բեռնատարով:<br>Անսահմանափակ քանակությամբ մեքենաները տրամադրվել են Արցախի «Վալեքս Գրուպի» կողմից:Ակումբը իրականացնում է նաև հրթիռաշինության և ավիամոդելավորման խմբակի կայացման և տարածման աշխատանքներ տարբեր քաղաքներով: Ակումբը նպատակ ունի կազմակերպելու ռազմահայրենասիրական, ռազմամարտական միջոցառումներ, սեմինարներ, հանդիպումներ և անցկացնել համապատասխան արշավներ ու ճամբարային հավաքներ, ինչպես նա նպատակ է հետապնդում կազմակերպել այցեր տարբեր զորամասեր:<br>**Նախաձեռնության աջակիցներ**<br>Անվադողերի հավաքման և տեղափոխման գործին անմիջական աջակցություն են ցուցաբերել և՛ անհատներ, և՛ տարատեսակ կառույցներ: Ամբողջական աշխատանքը իրականացվում է կամավորական սկզբունքով: |

**ՔԱՆԱԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ՝**

2018 թվականին իրականացվել է 33 մեքենաներով անվադողերի տեղափոխություն՝ ըստ տարբեր ուղղությունների:

Մարտ՝ 22 մեքենա, ապրիլ՝ 5 մեքենա, օգոստոս՝ 3մեքենա, սեպտեմբեր՝ 2 մեքենա, հոկտեմբեր՝ 1 մեքենա:

2019 թվականին իրականացվել է 119 մեքենա անվադողերի տեղափոխություն ըստ տարբեր ուղղությունների:

Ապրիլ՝ 15 մեքենա, մայիս՝ 10 մեքենա, հունիս՝ 4 մեքենա, օգոստոս՝ 20 մեքենա, սեպտեմբեր՝ 17 մեքենա, հոկտեմբեր ՝ 26 մեքենա, դեկտեմբեր՝ 27 մեքենա:

2020 թվականին իրականացվել է 18 մեքենա անվադողերի տեղափոխություն, մասնավորապես՝ հունվարի 27-ին՝ 18 մեքենա:

Տավուշյան դեպքերի ժամանակ մեր թիմը համալրվել է կամավորներով և դառձել ենք շուրջ 700 կամավոր: Տավուշյան միջադեպի օրերին մոտ 74 մեքենա անվադող ենք ուղարկել մի քանի քաղաքներից՝ Տավուշի՝ Մեհրաբ, Պառավաքար, Սև Քար, Իջևան, Բերդ, Նոյեմբերյանի զորամաս մոտ 55.000 անվադող: Նախիջևանի ուղղությամբ ևս 8 բեռնատար՝ Արարատի զորամաս, Արարատ քաղաքից ևս 5000 անվադող՝ Վայքի զորամաս՝ անհատ 3 բեռնատարներով:

Մոտ 80 կամազ անվադող հավաքել ենք Արցախի համար ԱԻՆ-ի նախարար Ֆելիքս Ցոլակյանի միջնորդությամբ և ԱԺ-ի ու Մարզպետների կապերի միջնորդությամբ: Տարբեր քաղաքների մեր հավաքած անիվները հավաքագրում ենք Երևանի Ավան, Արցախի 49 հասցեներում, նաև Մասիվի տարածքներում, որից հետո շաբաթական 10 կամազով ուղարկում ենք Արցախի տարբեր զորամասեր, Դրմբոնի «Վալեքս գրուպի» մեքենաներով, արդեն իսկ ուղարկվել է 20-ը:

Մինչ օրս ուղարկվել է 264 մեքենա, իսկ մեկ ամսվա ընթացքում ևս 50 կամազ գնալու է Արցախի զորամասեր 120.000 ից ավելի անվադող:

Անիվներով բեռնված բեռնատար մեքենաների 65%-ը տեղափոխել ենք Արցախ , 35% ՝ ՀՀ դիրքեր:

## ՄԵՐՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ

Առաջին իսկ օրվանից հավաքագրվել է մոտ 75 բեռնատար անվադող, որի կեսը մասը ուղարկվել է, կեսն էլ՝ Գյումրիում է, սպասում ենք ուղարկելուն: Հայորդաց տան հետ համատեղ մեր ՀԿ-ն իրականացրել է տարբեր միջոցառումներ՝ անհրաժեշտ պարագաների հավաք, և թղթաբանորեն տրամադրվել է Արցախի Գյուղնախարարությանը, Առողջապահության նախարարությանը, ԱԻՆ -ի պահեստներին և սկզբնական օրերին իրականացրել ենք Արցախում ԱԻՆ-ի պահեստներում բանվորական օգնող ուժերի համալրում մեր ՀԿ-ի կողմից՝ շուրջ 10 կամավոր:

Հոկտեմբերի սկզբից մենք իրականացրել ենք ամենօրյա մարտական պատրաստության ճամբար Երիտասարդների հետ և միաժամանակ զբաղվել Արցախին օգնություն տրամադրելով, որի ստացականները կտրամադրվեն ամբողջովին ավարտելուց հետո:

Պատերազմական օրերին ցուցաբերել ենք նաև մեր կամավոր աջակցությունը և օգնությունը, մասնավորապես՝

1. Սննդի մատակարարում՝ շուրջ 8 բեռնատար մեքենաներով:
2. Առաջին բուժօգնության պարագաններ, պատգարականներ՝ շուրջ 2000 հատ:
3. Ջերմատեսիլային և գիշերային սարքեր՝ շուրջ 20 հատ:
4. Զինվորական համազգեստ՝ շուրջ 100 հատ:
5. Ներքնակներ՝ շուրջ 1000 հատ և անձրևապաշտպաններ՝ շուրջ 10.000 հատ, քնապարկ՝ շուրջ 3000 հատ:

Այժմ մոտ երկու ամիս զբաղվում ենք նոր ներքնակ - վրանների աշխատանքներով, որը ջերմամեկուսիչ է, անջրաթափանց, շատ տաք պահող: Աշխատանքները ավարտելուց հետո նվիրատվություն կլինի Բանակին՝ ըստ ստացականի:

## ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐ

2020թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նախաձեռնել ենք մարտական ճամբարի իրականացում՝ նպատակ ունենալով բարձրացնել երիտասարդների ու դպրոցահասակ երեխաների շրջանում ռազմահայրենասիրական ոգին, ֆիզիկական պատրաստությունը, խթանել ռազմական գիտելքների ձեռքբերումը, ուսուցանել ողջ մնալու տակտիկաները, սովորեցրել ենք նաև՝ լեռնամագլցում, քարտեզագրում, տեղագրում: Անցկացրել ենք նաև կրակային պատրաստության դասեր: Ծրագրի շահառուները եղել են շուրջ 70 երիտասարդներ, այս պահին շուրջ 50 երիտասարդ ցանկանում են միանալ մեզ ու մասնակցել մարտական պատրաստության ճամբարին:

Հաշվետվությանը կից ներկայացնում եմ մեր գործունեության և իրականացրած ծրագրերը հավաստող փաստաթղթերն ու տեղեկանքները: